ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

Սեպտեմբերի 21-ին Հայաստանի Հանրապետության Անկախության տոնի առիթով Երևանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մատուցվեց Սուրբ Պատարագ: Պատարագիչն էր Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու հոգևոր տեսուչ Տ. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը:

Պատարագի ընթացքին կատարվեց Հանրապետական մաղթանք՝ Հայաստանի Հանրապետության անսասանության ու բարօրության համար: Մինչ մաղթանքը Հայրապետական իր շնորհավորական ուղերձը ներկաներին և համայն հայությանն ուղղեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Պատարագի սրբազան արարողությանը ներկա էին ՀՀ նախագահ տիար Սերժ Սարգսյանը, ԼՂՀ նախագահ տիար Բակո Սահակյանը, ՀՀ վարչապետ տիար Տիգրան Սարգսյանը, ՀՀ կառավարության անդամներ, բարձրաստիճան պետական այրեր, թեմական առաջնորդներ, Մայր Աթոռի միաբաններ:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

(Երևան, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, 21 սեպտեմբերի 2008 թ.)

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ.

Օրհներգությամբ, խնդությամբ ու մաղթանքով է լեցուն այսօր Հայ Եկեղեցին Հայոց պետականության վերականգնման պանծալի տարեդարձի առիթով: Մեր բոլոր եկեղեցիներում, ինչպես քաղաքամայր Երևանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու նվիրական կամարների ներքո, այս պահին Հանրապետական մաղթանքի արարողությամբ միասնական աղոթք ենք բարձրացնում երկինք՝ հանուն Հայաստանի Հանրապետության, մեր Հայրենիքի ազատ, շեն ու բարգավաճ կյանքի և լուսավոր գալիքի:

Անկախության Օրվա տոնական խորհրդով, Հայրապետական օրհնությամբ ջերմորեն ողջունում և Մեր շնորհավորանքներն ենք բերում սրբազան Պատարագի արարողությանը ներկա Հայաստանի Հանրապետության մեծարգո նախագահ տիար Սերժ Սարգսյանին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մեծարգո նախագահ տիար Բակո Սահակյանին, պետական պատվարժան այրերին, Հայաստանում դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչներին, մեր Եկեղեցու ուխտապահ ողջ հոգևոր դասին և համայն հավատավոր մեր ժողովրդին ի Հայաստան, Արցախ և ի Սփյուռս: